

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՀՀ Լոռու մարզպետարանում ֆինանսատնտեսական բնագավառի
/ֆինանսաբյուջետային, վարչական հսկողության, հաշվապահական
հաշվառման հարցերի/ փորձագետի

Փորձագետի ներգրավելու դեպքը և հիմնավորումները

Պետական մարմնին վերապահված գործունեության ոլորտում որոշակի ծրագրերի իրականացման նպատակով ներգրավվում է փորձագետ՝

ՀՀ Լոռու մարզում ֆինանսատնտեսական բնագավառի ռազմավարության մշակման և համակարգման աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Փորձագետի կողմից իրականացվող գործառույթներն են.

1. Իրականացնել մարզային ենթակայության կազմակերպությունների ֆինանսաբյուջետային համալիր վերլուծություն /հաշվապահական հաշվառում և այլն/,

2. Կատարել ՀՀ Լոռու մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության համալիր վերլուծություն /ֆինանսական գործունեության առողջացման ծրագրի ներկայացում, հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսագիտական հարցերի քննարկման նախապատրաստում և այլն/,

3. Մասնակցել բնագավառի մասնագետների համար նախատեսված վերապատրաստումներին և դասընթացներին,

4. Առաջարկել ֆինանսատնտեսական բնագավառի արդյունավետությունը ստուգող գնահատման ընթացակարգ,

5. Ներկայացնել ՀՀ Լոռու մարզում ֆինանսատնտեսական բնագավառի 2021-2025թթ. ռազմավարության մշակման և համակարգման աշխատանքներն իրականացնելու նպատակով առաջարկություններ,

6. Կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ ներկայացնել պարբերական հաշվետվություններ:

Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

Ակնկալվող արդյունքը

ՀՀ Լոռու մարզի ֆինանսատնտեսական բնագավառի 2021-2025թթ. ռազմավարության մշակման և համակարգման աշխատանքներն իրականացման հիմքերի, ֆինանսատնտեսագիտական վերլուծության առաջավոր մեթոդների ներկայացում՝ իրականացված վերլուծական աշխատանքի հիման վրա:

Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները

Փորձագետը եռամսյակը մեկ ներկայացնում է հաշվետվություններ:

Աշխատանքների գնահատման չափանիշները

Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ անգամ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել և վերջնական ամփոփմամբ:

Կատարված աշխատանքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

Աշխատանքների գնահատման արդյունքների ամփոփման ժամկետները

Հաշվետվության ներկայացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Աշխատանքը կատարելու համար փորձագետին ներկայացվող պահանջները

1. Տնտեսագիտություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն,
2. Ֆինանսատնտեսագիտական բնագավառում առնվազն տասը տարվա մասնագիտական փորձառություն, ներքին աուդիտի ենթաբնագավառում աշխատանքային հմտություն,
3. Հաշվապահական հաշվառման ենթաբնագավառի անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում և այդ բնագավառում աշխատանքային փորձ,
4. Պետական համակարգում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձը (Ֆինանսատնտեսագիտական բնագավառում) կրիտվի որպես առավելություն,
5. Հաշվետվությունների կազմման, տեխնիկական առաջադրանքների մշակման, վերլուծությունների կատարման փորձ,
6. Տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
7. Համակարգչային ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
8. Թիմում աշխատելու ունակություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

 Invalid signature



ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ